DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 279
Դեկտեմբեր 4, 1990

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Յովակիմ Եւ Անանա Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Փէյլըս Հայթց.

Սիրելի Տէր Հայր,

Նկատի ունենալով որ համայնքիդ պատգամաւորին պաշտօնավարութեան շրջանը աւարտած է, համաձայն Թեմական Կանոնագրութեան 14-Գ եւ 54 յօդուածներուն՝ պէտք է նոր պատգամաւորի եւ անոր անձնափոխանորդի ընտրութիւնը կատարուի համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին:

Բարի եղէք մինչեւ Փետրուար 18, 1990, նորընտիր պատգամաւորին անունն ու հասցէն ղրկել Առաջնորդարան: Անոր ընտրութիւնը պիտի վաւերացուի 89-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովի ընթացքին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 9-11, 1990, հիւրընկալութեամբ Թէնէֆլայ Նիւ Ճըրզիի Ս. Թովմաս Եկեղեցւոյ:

Կը ներփակենք օրինակը վկայագրին (Հայերէն եւ Անգլերէն լեզուներով), որով կը հաստատուի ինքնութիւնը համայնքիդ պատգամաւորին: Այս վկայագիրը պէտք է ստորագրուի Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ, եւ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ ղրկուի Առաջնորդարան:

Ձեզի եւ Ծխական Խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք բաջառողջութիւն եւ աստուածահաճոյ ձեր աշխատանքներուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ